

**Լրատվամիջոցների և լրագրության չափանիշների բարելավում  
Հյուսիսային Մակեդոնիայում. Media4EU ծրագիրը մեկնարկել է:**

2023 թվականի մարտի 29-ին Հյուսիսային Մակեդոնիայի Սկոպյե քաղաքում տեղի ունեցավ Media4EU ծրագրի մեկնարկային համաժողովը: Համաժողովը, որին մասնակցում էր միջազգային կառույցների, ազգային և տեղական ՁԼՄ-ների և Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների 30 ներկայացուցիչ, պաշտոնապես նշում է ծրագրի և դրա գործունեության սկիզբը:

«Media4EU – Քաղաքացիական հասարակության նախաձեռնություն Հյուսիսային Մակեդոնիայի՝ ԵՄ անդամակցության բանակցություններին ՁԼՄ-ների մասնակցություն» 3 տարի տևողությամբ ծրագիր է՝ նվիրված Հյուսիսային Մակեդոնիայի լրագրության և մեդիա ոլորտի չափանիշների բարելավմանը: Մեկօրյա համաժողովը սկսվեց ծրագրի և դրա ղեկավարների ներկայացմամբ EUROTHINK – Center for European Strategies գործադիր տնօրեն, ծրագրի ղեկավար **պրն. Դիմիտար Նիկոլովսկու** կողմից: Այնուհետև ներկայացվեցին Հյուսիսային Մակեդոնիայի ԵՄ բանակցային գործընթացում ՁԼՄ-ների և ՔՀԿ-ների կարևորության մասին ելույթները, որոնց մասնակցում էին Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետությունում Եվրամիության դեսպան **պրն. Դեյվիդ Գիրը** և Եվրոպական հարցերով **փոխվարչապետ Բոյան Մարչիչը**, որը կարևորեց կառավարության կողմից ծրագրին ցուցաբերած աջակցությունը և այս տեսակի ծրագրերի կարևորությունը ապատեղեկատվության դեմ պայքարում:

Համաժողովը շարունակվեց EUROTHINK-ի, ALDA-ի և BIRC-ի տարածաշրջանային համագործակցության բալկանյան ինստիտուտի կողմից

կազմված ծրագրի գործունեության և դրամաշնորհային սխեմայի ներկայացմամբ և եզրափակվեց հարց ու պատասխանով, որի ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեցան ներգրավվել կառուցողական քննարկումներին:

ALDA-ի զարգացման բաժնի ղեկավար **պրն. Մարկո Բոարիան** հակիրճ ներկայացրեց մեդիա թեմայի նկատմամբ Կազմակերպության նվիրվածությունը՝ ընդգծելով խոսքի ազատության կարևորությունը. «ALDA-ն երկար տարիներ անընդհատ ջատագովել է ներգրավվածությունը մեդիային և խոսքի ազատությանը: *Մկզբունքն այն է, որ ձայների բազմակարծությունը և երկխոսության ավելի շատ հնարավորությունները հանգեցնում են ավելի լավ տեղական կառավարման և քաղաքացիների դժգոհությունների բարձրաձայնման ավելի շատ հնարավորությունների*»: – ասաց պրն. Բոարիան:

### **Media4EU ծրագիրը նպատակ ունի բարելավել Հյուսիսային Մակեդոնիայի ԶԼՄ-ների և լրագրության չափանիշները:**

Media4EU ծրագրի նպատակն է Հյուսիսային Մակեդոնիայի լրագրության և մեդիա ոլորտները համապատասխանեցնել եվրոպական չափանիշներին՝ կազմակերպելով դասընթացներ, սեմինարներ և փոխանակումներ եվրոպացի լրագրողների հետ՝ Հյուսիսային Մակեդոնիայում երիտասարդության՝ լրագրության կարողությունների ամրապնդման և մասնագիտության գրավչության բարձրացմանը նպաստելու համար: Ծրագիրն ընդունում է, որ ԶԼՄ-ների համար ավելի ամուր չափանիշներ են անհրաժեշտ երկրի՝ ԵՄ-ին անդամակցելու գործընթացի համար և նպատակ ունի տեղեկատվության օգտակար աղբյուր լինել լրագրողների և ընտրողների համար, ինչպես նաև համագործակցության հնարավորություններ ընձեռել ԶԼՄ-ների, քաղաքացիական հասարակության և պետական կառույցների միջև: Ընդհանուր առմամբ, այս համաժողովը խթանեց ծրագիրը և դրա գործունեությունը և հիանալի

հնարավորություն ընձեռեց Հյուսիսային Մակեդոնիայի մեդիա հատվածում  
փոխանակումների և ցանցերի համար: